Համաձայնագիր

Լրացուցիչ համաձայնագիր № 1
20.01.2020թ.-ին կնքված թիվ PD-54-01-20
փոստային ծառայությունների մատուցման

ք.Երևան «--15-----ը» սեպտեմբերի 2020թ.

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ Ընկերություն)՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանի, մի կողմից, և Սոցիալական Ապահովության Ծառայությունը (այսուհետ սույն պայմանագրի իմաստով՝ Պատվիրատու կամ Հաճախորդ)՝ ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գևորգյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Կողմերը համաձայնության են գալիս 20.01.2020թ.-ին կնքված թիվ PD-54-01-20 փոստային ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ լրացումները և սահմանել հիբրիդ փոստ ծառայությունների մատուցման կարգն ու սակագները:

Հիբրիդ փոստ ծառայություններ

1. «Էլեկտրոնայինից թղթային» տարբերակով «Հիբրիդ փոստ» ծառայության շրջանակներում Հաճախորդը (Հաճախորդի՝ «Հիբրիդ փոստ» ծառայությունն սպասարկող իրավասու անձը) մուտք է գործում «Հիբրիդ փոստ» ծառայությունը սպասարկող համակարգ, իր կողմից կազմված փաստաթուղթն ուղարկելու նպատակով ծրագրի ցուցումներին համապատասխան անհատականացնում է փաստաթուղթը (գեներացնում է գծանիշ պիտակ) և ձևավորում է էլեկտրոնային փոստային առաքանի, որից հետո ծրագրի ցուցումներին համապատասխան ձևավորված էլեկտրոնային փոստային առաքանին ուղարկում է ստացողին:
2. Ուղարկված էլեկտրոնային փոստային առաքանին վերահսկելի կապուղու միջոցով հայտնվում է Ընկերության հատուկ վերահսկելի էլեկտրոնային միջավայր և պահեստավորվում է այնտեղ մինչև առաքանու ձևավորման գործընթաի իրականացումը:
3. «Էլեկտրոնայինից թղթային» ծառայության դեպքում էլեկտրոնային փոստային առաքանին ստանալու և հասցեավորման գործընթացն սկսելու նպատակով Ընկերության իրավասու աշխատողը մուտք է գործում համակագ և իրականացնելով ստացման գործընթացը՝ էլեկտրոնային փոստային առաքանին տպում է թղթային կրիչի վրա, այնուհետև ընկերության կողմից հաստատված հատուկ տեխնոլոգիական գործընթացի քայլերին համապատասխան իրականացնում է առաքանու ձևավորման գործընթացները (ծալում, ծրարավորում, հասցեի

տպագրում և այլն), որի շրջանակներում ապահովվում են գործընթացի գաղտնիությունն ու վերահսկելիությունը:

4. Ձևավորված առաքանիները նույն օրը հանձնում են Ընկերության փոստի տեսակավորման տեղամաս, որպես ընդունված ունիվերսալ փոստային առաքանի՝ դրանց հետագա առաքումը կազմակերպելու նպատակով:
5. «Էլեկտրոնայինից թղթային» ծառայության օգտագործողի ուղեցույցը Ընկերության կողմից տրամադրվում է Հաճախորդին:
6. Հիբրիդ փոստ հավելյալ ծառայության համար սահմանվում է հետևյալ սակագինը՝ 51 դրամ ներառյալ ԱԱՀ, մինչև երեք թերթ ներդրվածքի դեպքում, C65 ծրարով ծրարավորելու դեպքում (ծրարի արժեքը ներառված է):

Հաճախորդ	Ընկերություն
Սոցիալական ապահովության ծառայություն ք. Երևան, Նալբանդյան 13 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն 900011556355 Գլխավոր քարտուղար ----------Հ. Գևորգյան	"Հայփոստ" ՓԲԸ ք. Երևան 0002, Սարյան 22 ՀՀ: 1930003703150800 "Կոնվերս բանկ" ՓԲԸ ՀՎՀՀ: 02507464 հեռ. : /010/ 514-594/, 514-512 Գլխավոր տնօրեն ----------Հայկ Կարապետյան